

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվ. ՀՊՄՀ
դոցենտ, մանկ. գիտ. թեկն.
gayane-mardyan@rambler.ru

«ՓԱՐՎԱՆԱ» ԲԱԼԼԱԴԸ ԵՎ ՍԻՐՈ ԱՌԵՂԾՎԱԾԸ
(Նվիրվում է Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին)

Բանալի բառեր. Փարվանա, բալլադ, սեր, առեղծված, ժանր, իրական, ֆանտաստիկ, լիճ, արքայադուստր, ասպետ:

Ключевые слова: Парвана, баллада, любовь, загадка, жанр, истина, фантастика, озеро, принцесса, рыцарь.

Keywords: Parvana, ballad, love, mystery, genre, genuine, fantastic, lake, princess, knight.

«Փարվանա» բալլադին աշակերտները ծանոթանում են և՛ 8-րդ և՛ 11-րդ դասարաններում: 8-րդ դասարանում այդ բալլադն ամբողջությամբ զետեղված է դասագրքի մեջ¹: Նույն գրքում առկա է բալլադի ժանրային առանձնահատկությունները, մի քանի նորածանոթ բառերի բացատրություն և 13 հարցերից կազմված «Հարցեր և առաջադրանքներ» բաժինը:

11-րդ դասարանի դասագրքում «Փարվանա» բալլադը վերլուծվել է գրականագիտորեն²:

«Փարվանա»-ի և ընդհանրապես Հովհ. Թումանյանի բալլադների մասին հանգամանալից գրել է ակադ. Էդ. Ջրբաշյանը Հովհ. Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուի երկրորդ հատորում, իսկ հատորի բնագրերը կազմած և ծանոթագրած գրականագետներ Հ. Աբեղյանը և Ա. Չարենցը կարևոր փաստեր են հաղորդում այս բալլադի ստեղծման պատմության վերաբերյալ:

Բալլադի ժանրը

Բերվում է Էդ. Ջրբաշյանի բնորոշումը. «Բալլադը նոր ժամանակների գրականության հենց այն ժանրային տեսակն է, որը ծագել է ժողովրդական լեգենդների ավանդությունների և զրույցների ստեղծագործական մշակման ճանապարհով: Բալլադը համադրական

¹ Տե՛ս Դ. Գասպարյան, Գրականություն, 8-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2012, էջ 154-161:

² Տե՛ս Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Հայ գրականություն, 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2010, էջ 46-48:

ժանրային ձև է: Նրա բովանդակության և կառուցվածքի մեջ բնականորեն գուգակցվում են *իրականն* ու *ֆանտաստիկը*, *առօրեականն* ու *պայմանական-այլաբանականը*, ինչպես նաև *պատմողական*, *քնարական* և *դրամատիկական* տարրերը: Ժանրի այդ համադրական բնույթը շատ լավ է երևում նաև Թումանյանի երկերի օրինակով, որոնք իրենց հիմնական գծերով լիովին համապատասխանում են բալլադի ժանրի՝ նշված և ուրիշ էական հատկանիշներին»³: Նույն տեղում ասվում է, որ ռուս գրականության մեջ բալլադի լավագույն օրինակը տվել է Ալ. Պուշկինը, մասնավորապես՝ հենց Թումանյանի թարգմանած «Օլեգի երգը», «Ջրահեղձը» բալլադներում⁴:

Բալլադի սահմանման մեջ ընդգծված բառերը դառնալու են այն բանալիները, որոնցով բացահայտվելու է «Փարվանա» ստեղծագործությունը և՛ որպես գեղարվեստական գլուխգործոց, և՛ որպես գրական տեսակ: Այսօրինակ մոտեցմամբ գրականագիտական գիտելիքի ուսուցումը տեսանելի ու մատչելի է, իսկ գրական-գեղարվեստական խոսքի կախարդական ներգործուն ուժը՝ լիովին հասանելի աշակերտներին:

«Փարվանա» բալլադի ստեղծագործական պատմությունը պարզ է դառնում այդ քերթվածի քննական բնագրին կցված ծանոթագրություններից: Այս բալլադի ստեղծման ակունքը ժողովրդական է: Հովհ. Թումանյանն այն առաջին անգամ լսել է Ներսիսյան դպրոցի իր դասընկեր Գր. Վանցյանից: Ըստ վերջինիս բացատրության՝ «փարվանա» նշանակում է «կրակե թիթեռ»: Գր. Վանցյանը պատմել է հետևյալը. «Թագավորը մի աղջիկ է ունենում, ասում է՝ ով որ կրակ բերի, նրան կտամ: Ով գալիս է կրակի շուրջը պտտվում, որ կրակ տանի և միշտ ընկնում է մեջն այրվում»⁵: Ընկերոջից

³ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 2, էջ 541-542:

⁴ Նույն տեղում, էջ 543:

⁵ Նույն տեղում, էջ 558: Հ. Թումանյանն այս բալլադը գրել է 1902 թվականին, երբ արդեն Կարապետ Կոստանյանցը հրատարակել էր Հովհաննես Թլկուրանցի և յուր տաղերը գրքույկը (տե՛ս Յովհաննես Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892, 35), սակայն նրանում կան պակասող հատվածներ: Էմ. Պիվազյանն առաջին անգամ ամբողջությամբ հրատարակում է Հովհաննես Թլկուրանցու լավագույն սիրերգերից մեկը՝ «Դու ես գարնանային վարդ ու բուրաստան» սկսվածքով: Այս բանաստեղծության տներից մեկում տաղասացն իրեն համեմատում է այն թիթեռի հետ, որը թռչում է դեպի այրվող հուրը, վառվում ու մոխրանում.

Քան զթիթեխն ի հուր որ է ի վառման,

Եկայ որ այրիմ և մոծիք դառնամ,

Յորժամ տեսայ զքեզ, է՛ արևնման,

Անձրս սարսափեց ու դեռ կու դողամ:

Սիրով մի՛ սպանաներ, ճելլատ էֆենտի:

այս պատմությունը լսելով՝ Հովհ. Թումանյանն այցելել է Փարվանա լիճ, նրա մոտակա գյուղերը և գուցե ավանդությունը լսել է նաև գյուղացիներից:

Առաջին անգամ «Փարվանան» «Լեզենդ» ենթավերնագրով տպագրվել է 1903-ին տողատակի հետևյալ ծանոթագրությամբ. «Փարվանա լիճը գտնվում է Ախալքալաքից 20 վ. Հյուսիս-արևելք: Փարվանա են կոչվում և՛ այն թիթեռները, որ թրթռում են ճրագի շուրջը»⁶:

«Փարվանա» բալլադը հավերժական սիրո մասին է. Փարվանա անձնագոռի կտրիճները հավերժորեն որոնում են անշեջ հուրը և այրվում սիրո որոնումների ճանապարհին:

Հավերժական սիրո առեղծվածը բացատրվում է աշակերտներին: Տարիքային առումով նրանց արդեն հետաքրքրում է փոխադարձ սերը՝ հակառակ սեռերի նկատմամբ: Ահա այս առումով էլ «Փարվանան» մի խորհրդավոր ներգործուն ուժ ունի: Կնոջ և տղամարդու սիրո մասին գրվել են բազմաքանակ գրքեր, ուսումնասիրություններ: Դրանք զարմանալիորեն ամենատարբեր դարերում տվել են տարբեր բացատրություններ: Միրո հնագույն բացատրությունը ներկայացնում է Սողոմոնին վերագրվող և Աստվածաշնչի Հին Կտակարանում զետեղված Երգ երգոցը: Երգ երգոցը հեթանոսական ժամանակներում է ստեղծվել, սակայն այն տեղ է գտել քրիստոնեական սրբազան գրքում որպես կանոնիկ ստեղծագործություն: Տարբեր ազգերի աստվածաբանները Երգ երգոցում տեսել են այլաբանություն:

Հարսի և փեսայի սիրատոջոր կապի մեջ փառաբանվում է Հիսուսի՝ և Եկեղեցու սերը միմյանց նկատմամբ: Հիսուսը փեսան է, իսկ հարսը՝ եկեղեցին. «В Православной церкви под отношениями Возлюбленной (Невесты) книги “Песнь Песнией” понимается благодатное таинство союза Христа (Бога) и человечества (Церкви)»⁷. Գրիգոր Նարեկացին էլ դեռևս 977-ին իր Երգ երգոցի մեկնության մեջ նշում է այդ հնագույն գրական հուշարձանի այլաբանական իմաստ ունենալը, և այդ երևույթը հիմնավորում է հանճարեղ բացատրությամբ. «Արդ չիք յերկրի

(Տե՛ս Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 155): Եթե Հովհ. Թումանյանին անձանոթ է եղել այս տաղը, ապա նշանակում է, որ թիթեռի ու այրվող կրակի այսօրինակ կապը եղել է ոչ միայն Ջավախքի բանահյուսության, այլև կիլիկյան բանահյուսության մեջ – Գ.Մ.:

⁶ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 2, էջ 559:

⁷ Песень песней Соломона, Москва, 2005, с. 127.

պատուականագոյն և առաւել քան զսէր առն և կնոջ»⁸: Հայ եկեղեցու երևելի դէմքերից մեկը՝ Հովհան Մանդակունին, իր «Սիրո մասին» ճառում ճշմարիտ սերը համարում է միայն մարդու՝ Աստծու նկատմամբ ունեցած սերը. «Որտեղ սերն է, այնտեղ վախ չկա, ինչպէս Հովհաննէսն է ասում. «Սիրո մեջ երկյուղ չկա և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը» (Ա.Հովհ., Դ, 18)»⁹: Սիրո նման մեկնաբանությունը լիովին վերաբերում է նաև կնոջ ու տղամարդու սիրուն, որի մասին հետաքրքիր դատողություններ ունի 18-րդ դարի մեծագոյն լուսավորիչ Ֆրանսուա Վոլտերը: Նա տղամարդու և կնոջ սերը միմյանց նկատմամբ համարում է մեծագոյն աստվածային պարզ. «Если ты подумаешь об этих преимуществах (խոսքը տղամարդու և կնոջ միմյանց նկատմամբ ունեցած առավելությունների մասին է – **Գ.Մ.**), то ты вместе с графом Рочестером скажешь: Любовь в стране атеистов заставила бы поклоняться Божеству»¹⁰.

20-րդ դարում սիրո առեղծվածը լուծելու հետաքրքիր փորձ է շվեյցարացի փիլիսոփա Դենի դը Ռուժմոնի «Սերը և Արևմուտքը» գիրքը, որում զուգորդվում են թե՛ աստվածաբանական սերը և թե՛ տղամարդու ու կնոջ մարմնական սերը:

Աստվածաբանական սիրո ընկալում

«Առաջին հոսանքը միավորիչ միստիկան է, որը ձգտում է հոգու և աստվածության ամբողջական միաձուլմանը: Երկրորդ հոսանքը երևի կարելի է անվանել հարսներգական միստիկա, որը ձգտում է հոգու և Աստծու ամուսնության և ենթադրում, որ էական մի գատորոշում է պահպանվում արարածի և Արարչի միջև»¹¹:

Վեհ սիրո գաղափարը

«Բռնաբարությունը և բազմամուսնությունը կնոջը զրկում են նրա հավասարի հատկանիշներից՝ իջեցնելով նրան իր սեռի աստիճանին: Վայրենի սերն ապանձնավորում է մարդկային հարաբերությունները:

⁸ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւն, Վենետիկ, 1840, էջ 275: (Տե՛ս նաև Սուրբ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն Երգ երգոցի, Ս. Էջմիածին, 2007, էջ 25, «Արդ, չկա երկրի վրա ավելի պատվական և առավել սեր, քան տղամարդու և կնոջ սերը»):

⁹ Հովհան Մանդակունի, Ճառեր, Ս. Էջմիածին, 2008, էջ 272: Հովհ. Մանդակունին մեջբերումը կատարում է Հովհաննէս առաքյալի ընդհանրական առաջին թղթից, որն ամբողջության մեջ հետևյալն է. «Սիրո մեջ երկյուղ չկա, և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը, որովհետև երկյուղը տանջանքով է ուղեկցվում, և ով երկնչում է, կատարյալ չէ սիրո մեջ»: (Տե՛ս Ա, Հովհաննէս, Դ, 18, 19):

¹⁰ Франсуа Мари Аруз Вольтер, Философские произведения, Москва, 2005, с. 282.

¹¹ Դենի դը Ռուժմոն, Սերը և արևմուտքը, ֆրանսերենից թարգմանեց Ալեքսանդր Թովչյանը, Երևան, 2007, էջ 158:

Մինչդեռ, երբ տղամարդը կարողանում է ինքնիրեն տիրապետել, ապա ոչ թե «կրքի» (խառնվածքի իմաստով) պակասից է, այլ պարզապես սիրում է, և հենց հանուն այդ սիրո նա հրաժարվում է ինքնիրեն պարտադրել, նա հրաժարվում է բռնությունից, որ նախնառաջ ցանկանում է ուրիշի բարին: Նրա եսասիրությունն անցնում է ուրիշով: Պիտի ընդունենք, որ դա մի լուրջ հեղափոխություն է»¹²:

Սրանք տեսական նվազագույն գիտելիքներ են, որոնք կան հմուտ ուսուցչի գիտելիքների զանազարանում և տեղին օգտագործվում են «Փարվանա» բալլադի սիրո առեղծվածը բացատրելիս:

Բալլադի ժանրի ուսուցման մեթոդական բաղադրիչների բացատրությունն ըստ «Փարվանա» քերթվածի

Իրականը «Փարվանա» բալլադում

Իրականը Փարվանա լճի գոյությունն է, որը գտնվում է Ջավախք աշխարհում:

Ֆանտաստիկը «Փարվանա» բալլադում

Ֆանտաստիկը Փարվանա արքայի գեղանի դստեր արցունքներից Փարվանա լճի առաջացումն է.

Տըխուր աջիկն արքայի
Նայե՛ ց, նայե՛ ց սարերն ի վեր,
Ճամփաներին ամայի,
Հույսը հատավ... ու լաց եղավ.
Էնքա՛ն արավ լաց ու կոծ,
Որ լիճ կըտրեց արտասուքը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց,
Ծածկե՛ ց, կորա՛ն, ինքն էլ հետը...
Այժմ էնտեղ տըրտմաշուք
Խոր Փարվանա լիճն է ծրփում,
Հըստա՛կ, ինչպես արտասուք: (ԵԼԺ. հ. 2, էջ 126)

Առօրեականը «Փարվանա» բալլադում

Առօրեականը «Փարվանա» բալլադում արքայադստեր փեսացու ընտրելու դրվագն է ամուսնանալու նպատակով.

Մեծ բախտը սակայն առաջն էր դեռ.
Եկավ էն օրն էլ հասավ երջանիկ,
Ու դըրկեց արքան ուրախ դեսպաններ
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք:
-Ո՛ր տեղ է, ասավ, էն քաջը, թե կա,

¹² Նույն տեղում, էջ 325:

Իմ չընաշխարհիկ դըստերն արժանի,
Թող առնի իր ձին, իր զենքն ու զըրահ,
Գա, ցույց տա իրեն, իր բախտը տանի...

(ԵԼԺ, հ. 2, էջ 122)

Պայմանական – այլաբանականը «Փարվանա» բալլադում

Պայմանական – այլաբանականը անշեջ հրի բերելու պահանջն է.

-Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ

Եվ կամ աստղը երկընթի,

Ոչ էլ գոհար եմ պահանջում

Սեր-ընկերից իմ կյանքի:

Ես նըրանից հուր եմ ուզում,

Անշեջ հուրը սրբազան,

Ով կըբերի անշեջ հուրը,

Նա է ընտրած իմ փեսան... (ԵԼԺ, հ. 2, էջ 124)

Պատմողական տարրը «Փարվանա» բալլադում

Պատմողական տարրը պարզորոշ է փեսատեսի մրցույթում.

Հագած, կապած զենք ու զըրահ,

Ձիանք հեծած ամեհի,

Ահա եկել հավաքվել են

Կտրիճները Կովկասի,

Ծեր Փարվանա թագավորի

Ապարանքի հանդիման

Կազմ ու պատրաստ սպասում են

Մոտիկ ժամին մրցության:

Ըսպասում են ողջ աշխարհքը՝

Եկած, կիտված Փարվանա,

Թե ո՞ր կըտրիճն արդյոք պիտի

Էն սիրունին տիրանա: (ԵԼԺ, հ. 2, էջ 122)

Քնարական տարրը «Փարվանա» բալլադում

Քննարական տարրը բալլադում հրաշալի դրսևորված է Փարվանա արքայի և նրա դստեր արտաքին տեսքի հակադրական գեղեցիկ նկարագրի մեջ.

Հայրը ինչպես մրռայլ մի ամպ,

Աղջիկն անուշ մի լուսին,

Ամպ ու լուսին իրար փարված՝

Դուրս են գալի միասին: (ԵԼԺ, հ.2, էջ 123)

Դրամատիկական տարրը «Փարվանա» լեգենդում

Դրամատիկական տարրը «Փարվանա» լեզենդում արտահայտված է արքայի և նրա դստեր մի շարք երկխոսությունների մեջ: Ահա դրանցից մեկը.

-Հայրի՛կ, ինչո՞ւ ետ չդարձան
Էն քաջերը սիրատենչ.
Մի թե, հայրի՛կ, ինձ մոռացան,
Էլ չեն բերիլ հուրն անշեջ:
-Ո՛չ, իմ դրստրիկ, կրգան անշուշտ
Ու կրբերեն էս տարի.
Կըռիվներով արյունըռուշտ
Լիքն է ճամփեն քաջերի:
Ո՛վ իմանա, պետք է անցնեն
Մութ աշխարհքից, սև ջրից
Ո՛վ իմանա, պետք է փախցնեն
Յոթգըլխանի դևերից: (ԵԼԺ, հ. 2, էջ 124-125)

«Փարվանա» բալլադը մեծ հնավորություն է ընձեռում ներառարկայական կապերի համար:

Նրանում ակնարկ կա հրաշապատում հեքիաթներում հաճախ հանդիպող «Մութ անտառների», «սև ջրերի», «յոթգըլխանի դևերի» վերաբերյալ: Սա վերստին հաստատում է, որ բալլադի հիմքը ժողովրդական-բանահյուսական է: Նրանում խոսվում է նաև ամուսնության համաձայնության խորհրդանիշ խնձորի մասին.

Ասավ արքան, ձեռքը ձրքեց,
Նըշան տըվավ պայքարին,
Այնինչ՝ աղջիկն առաջ եկավ
Կարմիր խնձորն իր ձեռքին: (ԵԼԺ, հ. 2, էջ 123)

Խնձորը քրիստոնեական ավանդությամբ համարվել է սրբացված պտուղ: Խնձորի նման ընկալումն առկա է աշխարհի շատ ժողովուրդների մոտ. “Яблоко олицетворяет любовь, **брак**, весну, молодость, плодородие, долголетие или бессмертие”¹³.

Խնձորի խորհրդանիշն առկա է թե՛ հայ ժողովրդական բանահյուսության և թե՛ միջնադարյան տաղերգության մեջ: Բոլոր դեպքերում այն ամուսնության համաձայնության իմաստ ունի: Բերենք օրինակներ՝

«Մասունցի Դավիթ» էպոսը

¹³ Энциклопедия символов, Москва, Санкт-Петербург, 2005, с. 756.

Խանդութի առաջին հայացքից սիրահարվում է Դավթին և նրան է շարտում խնձորը՝ որպես իր սիրո նշան.

Քշեց, գնաց առջև Խանդութի պատուհան:
Խանդութ խանում, որ այք ընկավ,
ԶԴավիթ տեսավ, ուրախացավ,
Ուրախութենե խնձոր մեզար Դավթին:
Խանդութ խնձոր մեզար Դավթին:
Դավիթ խնձոր բռնեց վեր ձիուն,
Խնդացավ վեր խնձորին¹⁴:

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ եղած ծիսական երգերում ևս խնձորը դիտվում է որպես ամուսնության խորհրդանիշ.

Ես ունեմ մի կարմիր խրնձոր,
Կարմիր խնձորն ի անմահական.
Քանի վեր կը թալեմ՝ վեր-վեր կըխաղա,
Էն էլ քո սիրո նշան ա:

Զան, ջան, վիճակ ջան,
Ազաբ լաճեր քեզ կուրբան¹⁵:

Խնձորի նման նշանակությունն առկա է նաև քուչակյան հայրեններում, ուր ասվում է, թե ճշմարիտ սերը խնձորով պիտի, այսինքն՝ փոխադարձ սիրո հիմքով.

Երեկ ցորեկով բարով
տանէին մեկ եար մի ճորով.
Ըզնա ճորով է տարած
կամ խաբած է զինք դրամով:
Սերըն որ դրամով լինի,
զինք էրել պիտի կըրակով.
Սերըն խընձորով պիտի
ու դրամ-դրամ շէքերով¹⁶:

Խնձորի նման ընկալում տեսնում ենք միջնադարյան մի շարք հայ տաղասացների մոտ, ինչպես Հովհաննես Թլկուրանցու ու Նաղաշ Հովնաթանի¹⁷:

¹⁴ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, երկրորդ հրատարակություն, Երևան, 1961, էջ 264:

¹⁵ Ա. Դուլխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 175:

¹⁶ Նահապետ Քուչակ, Հարյուր ու մեկ հայրեն, Երևան, 1988, էջ 102:

¹⁷ Գրիգոր Նարեկացին Երգ երգոցի մեկնության մեջ գրում է. «Նախ, պետք է տեսնել խնձորի հատկությունը և ապա հասկանալ նրա ներսում եղած զգաստացնող

Հովհաննես Թլկուրանցուն վերագրվող «Հովհաննես և Աշա» քերթվածում, որն ունի «Այս ինչ կրակ էր զիս այրեց» սկսվածքը, թուրք մոլլայի աղջիկ Աշան հայ տերտերի որդուն՝ Հովհաննեսին, իր սերն արտահայտում է՝ նրան խնձոր նետելով.

Խնձոր ձգեց, մտիկ չարի,
Մէկ մ'այլ ձգեց՝ ցածցայ առի.
-Մէն միւսիրման, մոլլա դըզի,
Պէն Յովհաննէս, քեշիշ օղի,
Խնձորդ ի յիս ի՞նչ բան ունի¹⁸:

«Փարվանա» բալլադից 8-րդ դասարանի դասագրքի հեղինակները առանձնացրել և բացատրել են հետևյալ պատմաբանները, բարբառային ու գրական ձևեր՝ դրանիկներ, նաժիշտ, պայազատ, մայիլ մնալ, տրտմաշուք: Այս առաջադրանքին կարելի է հավելել նոր պահանջ. վերոհիշյալ բառերով կազմել նախադասություններ, գրել շարադրություն «Մեր հասկացության ներկայնակը» կամ «Սիրում եմ...» վերնագրերով:

Ուսուցչի կազմած նախադասությունները

- ***Դրանիկները***, տոնական զգեստներ հագած, ցնձագին դիմավորեցին հաղթանակած Հայոց արքային:
- ***Նաժիշտը*** հիացած նայում էր արքայադստեր կարմիր զգեստին, որը նախշված էր ոսկեփյուռ մարգարիտներով:
- Երիտասարդ ***պայազատները*** մտահոգ էին. նրանք մեկնում էին ռազմի դաշտ՝ հայրենիքը պաշտպանելու:
- Փարվանա արքայադստերը տեսնելու եկած կտրիճները ***մայիլ մնացած*** դիտում էին վերջինիս արտասովոր գեղեցկությունը:
- Այդ ***տրտմաշուք*** արարողությանը ներկա էին քաջարի հրամանատարի զինակիցները:

Ուսուցիչը գրականության տեսրերում գրել է տալիս Փարվանա արքայադստեր հետևյալ խոսքերը.

-Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկրնքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Մեր-ընկերից իմ կյանքի:

ակնարկը: Խնձորն առողջ կերակուր է և հիվանդներին շատ ախորժելի և թագավորներին իսկ շատ վայելուչ և զանազան հոտերով անուշացնում է հոտոտողների քիմքը, որը մեր սուրբ Գրիգոր Լուսավորիչն է ասում (տե՛ս Սուրբ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն Երգ երգոցի, էջ 194):

¹⁸ Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 226:

*Ես նրանից հու՛ր եմ ուզում,
Անշեջ հուրը սրբազան,
Ով կրքերի անշեջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան... (ԵԼԺ, հ. 2, էջ 124)*

Բնութագրելով Հովհ. Թումանյանի բալլադները՝ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը դրանք համարում է հայ գրականության չխամրող արժեքներ և ավելացնում. «Թումանյանի լավագույն բալլադները այդ ժանրի դասական նմուշներից են ոչ միայն ազգային, այլև համաշխարհային գրական չափանիշներով»¹⁹: Այս պարտավորեցնող գնահատականը ոգևորիչ է ուսուցչի համար «Փարվանա» բալլադը ամենայն մանրամասնությամբ, բազմագիտակ փաստերով և նորացված գրական մեթոդներով հայ աշակերտներին ուսուցանելու:

Գ. Մարդյան

«Փարվանա» բալլադը և սիրո առեղծվածը Ամփոփում

Հոդվածում քննարկվում է բալլադի ժանրը, ստեղծման ակունքները, աստվածաբանական սիրո ընկալումը (սիրո վեհ գաղափարը), ֆանտաստիկը ստեղծագործության մեջ: Բալլադի սահմանման մեջ ընդգծված բառերը դառնալու են այն բանալիները, որոնցով բացահայտվելու է «Փարվանա» ստեղծագործությունը և՛ որպես գեղարվեստական գլուխգործոց, և՛ որպես գրական տեսակ: Այսօրինակ մոտեցմամբ գրականագիտական գիտելիքի ուսուցումը տեսանելի ու մատչելի է, իսկ գրական-գեղարվեստական խոսքի կախարդական ներգործուն ուժը՝ լիովին հասանելի աշակերտներին:

¹⁹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 2, էջ 548:

Г. Мардян

Баллада “Парвана” и загадка любви

Резюме

В статье обсуждается жанр баллады, источники создания, восприятие божественной любви (идея великой любви), фантастическое в произведении. Отмеченные в балладе “Парвана” слово станут теми ключами, при помощи которых произойдет ее осмысление и как художественного шедевра, и как литературный тип. При таком подходе изучение литературоведческих знаний становится визуальным, а волшебная сила литературно - доступным ученикам.

G. Mardyan

The ballad of “Parvana” and the mystery of love

Summery

The article discusses the genre of ballad, its sources of origin, the perception of love from a theological point (the ideology of great love) and fantasy creation. Highlighted words become the clues in defining a ballad which make “Parvana” a fiction masterpiece and a piece of literature. The teaching approach of literary science becomes visible and accessible. The magically effective power of literary speech is then achievable to schoolchildren.

Խմբագրություն է ուղարկվել 12.07.19

Հանձնարարվել է գրախոսության 26.07.19

Տպագրության է հանձնարարվել 15.10.19